

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակում նոր մարտահրավերներ են առաջացել տնտեսության բացառապես բոլոր ոլորտներում: Կարևորագույններից մեկը կրթության ոլորտն է՝ իր առջև դրված խնդիրներով և զարգացման գործընթացի մեջ ներգրավված լինելու պարտադրված անհրաժեշտությամբ:

Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի ավելի քան կես դարյա ուսումնամանկավարժական և գիտահետազոտական գործունեության լավագույն փորձը բուհից պահանջում է ուղղակիորեն արագ և օպերատիվ կերպով արձագանքել ժամանակի իրողություններին, որպես կարևորագույն քայլ դիտարկելով կրթության և գիտության ոլորտում հասարակության համապատասխան ռեսուրսների ու կառույցների համախմբումը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանը, ելնելով հասարակության առաջընթացի միտումներից, աշխատաշուկայի փոփոխվող պահանջներից, ինչպես նաև համապետական արդի մարտահրավերներից, տարածաշրջանում ստանձնում է համակարգաստեղծ դերակատարություն, ստեղծելով ուսումնական, կրթական, գիտական և նորարարական **էկոհամակարգ**, որտեղ՝

- **դիմորդը** ձգտելու է ազնիվ մրցակցության պայմաններում դրսևորել լավագույն հատկանիշները, որի արդյունքում իր արժանի տեղը կգրադեցնի համակարգում,
- **ուսանողը**, լինելով ուսումնամշակութային համայնքի լիիրավ անդամ, ձգտելու է ձեռք բերել արդիական, շարունակական գիտելիքներ, արդյունքում՝ մտածել ստեղծագործաբար և առաջ անցնել աշխատաշուկայի պահանջներից,
- **պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը** ձեռք կբերի ժամանակի ոգուն համահունչ նորարարական գիտելիքներ և գործիքակազմ, կունենա անհատական և մասնագիտական շարունակական աճ, արդյունքում՝ սեփական ազնիվ և հարգանքի արժանի աշխատանքով կվճարվի ըստ արժանվույն:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի ռազմավարական նպատակը Լոռու մարզում համակարգված, առաջադեմ կենտրոնի ստեղծումն է, որը միավորում և աստիճանաբար զարգացնում է գիտական, կրթական, հետազոտական և մշակութային ներուժը՝ հիմնվելով բուհի հիմնական գործունեության արդիականացման վրա և կոչված է ՀՀ-ի նորարարական զարգացման պետական քաղաքականության շահերի սպասարկմանը:

Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանն իր առջև նպատակ է դնում.

- իրականացնել բարձր որակավորում ունեցող և մրցունակ մասնագետների բազմակողմանի ուսուցում,
- լինել գիտական գաղափարների հղացման և գիտական նվաճումների ու նորարարությունների փոխանցման (տրանսֆեր) մարզային խթանիչ կենտրոն,
- ձևավորել երիտասարդների ստեղծագործական և մշակութային ներուժի իրացման պայմաններ,

դրանով իսկ ապահովելով Լոռու մարզի սոցիալ-տնտեսական, նորարարական և տեխնոլոգիական զարգացումը և ամրապնդել Հայաստանի Հանրապետության դիրքերը տարածաշրջանում:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ուսումնասիրելով Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի նախորդ տարիների գոյություն ունեցող հայեցողական, ռազմավարական, ինքնավերլուծության փաստաթղթերը, ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական ստուգումների արդյունքները, դրանք ենթարկելով վերլուծության, ստորև ներկայացվում են կարճաժամկետ հեռանկարում (2020-2025թթ.) բուհի զարգացման ռազմավարության նպատակների իրականացմանն ուղղված հետևյալ հիմնական խնդիրները.

- 1) **արդիականացնել կրթական գործընթացի կառուցվածքը, կրթական ծրագրերի բովանդակությունն ու նյութատեխնիկական ապահովումը՝** ապագա մասնագետների տեսական և գործնական վերապատրաստման որակի բարելավման, մասնագիտական կրթության շարունակականության ապահովման համար՝ գործատուների պահանջներին և Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին համապատասխան,
- 2) **կատարելագործել ուսանողների և գիտամանկավարժական աշխատողների հետազոտական և նորարարական աշխատանքների պլանավորման և օժանդակության համակարգը՝** ուղղված Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնոլոգիայի գերակա ոլորտների շրջանակներում խոստումնալից ծրագրերի իրականացմանը, գիտական համայնքների ինտեգրմանը, գիտական կադրերի

վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, գիտական հետազոտությունների արդյունքների գործնական ներդրմանը, տարածաշրջանային առաջատար ընկերությունների հետ շփումների ակտիվացմանը,

- 3) **ստեղծել պայմաններ, ուղղված գիտամանկավարժական աշխատողների արդի մասնագիտական կարողությունների ձևավորմանը՝** համալսարանի աշխատակազմի ներուժի անհատական և մասնագիտական իրացման համար (անձնակազմի վերաորակավորում, կադրերի կառավարման համակարգի զարգացում, մասնագիտական և սոցիալական շարժունության աջակցություն),
- 4) **բարեփոխել համալսարանի կառավարման համակարգը՝** ուղղված նոր մեխանիզմների մշակմանը և ներդրմանը՝ պահպանելով և զարգացնելով առկա ենթակառուցվածքների և կառավարման ներուժը, որը կբերի կառավարման համակարգի գործառույթների ընդլայնմանը և վերապրոֆիլավորմանը՝ ստեղծելով նոր ենթակառուցվածքներ, ինչպես նաև եկամտի նոր աղբյուրներ:
- 5) **ապահովել պայմաններ տարածաշրջանի հոգևոր-մշակութային և հայրենասիրական միջավայրի զարգացման համար՝** կրթելու ինքնակազմակերպման ունակ անձեր, որոնք, ունենալով քաղաքացիական կայուն դիրք, կարող են ընդգրկվել տարբեր սոցիալական համայնքներում, կենտրոնանալ Հայաստանի Հանրապետությունում իրենց մասնագիտական հմտությունների և կարողությունների իրագործման վրա:

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ
ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1) Կրթական գործունեության արդիականացում:

Կրթական գործունեության արդիականացման ռազմավարական ուղղությունն է պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ովքեր կբավարարեն տարածաշրջանի նորարար սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և պահանջված կլինեն աշխատուժի ժամանակակից շուկայում:

Կրթական գործունեության արդիականացումն ուղղված է հետևյալ հիմնական խնդիրների լուծմանը՝ կրթական գործունեության կառուցվածքային և կազմակերպչական արդիականացում, կրթական ծրագրերի արդիականացում, մարզում տաղանդավոր դիմորդների պահպանում և համալսարանական միջավայրում տաղանդների զարգացում:

Նշված խնդիրների լուծումը թույլ կտա մինչև 2025 թվականն ավելացնել բարձրագույն կրթության ուսումնական ծրագրերում առկա ուսուցման ուսանողների, ինչպես նաև ավարտական և հետբուհական ծրագրերում ընդգրկված ուսանողների լրակազմը, բարձրացնել կրթական գործունեությունից համալսարանի եկամուտները, ավելացնել աշխատանքի տեղավորված շրջանավարտների մասնաբաժինը:

Առաջնահերթ միջոցառումներ

h/h	Միջոցառման անվանումը / Բենեֆիցարներ (շահառուներ) Դիմորդներ (Դ), ուսանողներ (ՈՒ), պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ (ՊԴԱ), ադմինիստրատիվ աշխատողներ (ԱԱ)	
1	<p>Հայտնի ծրագրային ապահովումների անվճար օգտագործում՝ ըստ մասնագիտությունների .</p> <ul style="list-style-type: none"> - կրթական գործընթացում օգտագործվող գոյություն ունեցող ծրագրաշարերի վերանայում, - հայտնի SS ընկերությունների ծրագրերի անվճար տրամադրման կամ արտոնյալ գնման համար բանակցությունների վարում, - ամպային (cloud) միջավայրում անվճար գրանցման և տվյալների պահմանման կազմակերպում 	<p>ՈՒ</p> <p>ՊԴԱ</p> <p>ԱԱ</p>
2	<p>Էլեկտրոնային գրադարանների և ռեսուրսների մատչելիություն և դրանց կիրառությունների ընդլայնում.</p> <ul style="list-style-type: none"> - տպագիր գրադարանների հիմնավորված, հետզհետե կրճատում, դրանց համարժեք փոխարինումը էլեկտրոնային ըստ կրթական ոլորտների, - կրթական գործընթացների մեջ էլեկտրոնային կրթական միջավայրի տարրերի համակողմանի և ամբողջական ներդրում* 	<p>ՈՒ</p> <p>ՊԴԱ</p>
3	<p>Moodle (Modular Object-Oriented Dynamic Learning Environment) – ուսման կառավարման համակարգի բազմակողմանի ներդրումը ուսումնական գործընթացում.</p> <ul style="list-style-type: none"> - հեռավար դասընթացների կազմակերպման ոլորտի ընդլայնում և ակտիվացում, - համակարգի ներդրումը առկա և հեռակա ուսուցման գործընթացներում՝ որպես էլեկտրոնային-կրթական միջավայրի անհրաժեշտ բաղադրիչ* 	<p>ՈՒ</p> <p>ՊԴԱ</p>

* միջոցառումը կրերի տվյալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազմանը

h/h	<p align="center">Միջոցառման անվանումը / Բենեֆիցյարներ (շահառուներ) Դիմորդներ (Դ), ուսանողներ (ՈԻ), պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ (ՊԴԱ), աղմինիստրատիվ աշխատողներ (ԱԱ)</p>	
4	<p>Գիտելիքների գնահատման ռեյտինգային-բալային համակարգի կատարելագործում. - գիտելիքների գնահատման առկա համակարգի վերանայում, - վերահսկողության տարբեր ձևերի ներդրում</p>	ՈԻ
5	<p>«ՈԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՏԱԶԳՈՒՄ» - (համաներում մեկ ուսումնական տարվա համար)՝ որպես կրթության որակի պահանջներին համապատասխանեցմանն ուղղված անհետաձգելի գործընթաց*, - առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների պարտադիր հաճախելիության վերահսկողություն (հեռացումների կանոնակարգի վերանայում), - դասընթացներին պատշաճ հաճախող, բայց չհասցնող ուսանողների համար անվճար կարճաժամկետ դասընթացների կազմակերպում</p>	ՈԻ
6	<p>Գործատուների տարածքում մասնագիտացված ամբիոնների կազմակերպում. - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - գործատուի կադրերի ներգրավումը ուսումնական գործընթացում</p>	ՈԻ ՊԴԱ
7	<p>Դիմորդների պատրաստականության, մասնագիտական կողմնորոշման և իրազեկման մակարդակի բարձրացում. - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - գյուղական համայնքների դիմորդների համար միասնական քննություններին նախապատրաստման անվճար դասընթացների կենտրոնացված կազմակերպում (համայնքների կամ համալսարանի տարածքում),</p>	Դ ՊԴԱ
8	<p>Մարզային ավագ դպրոցների հետ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ. - համատեղ օլիմպիադաների կազմակերպում, - դպրոցականների հետազոտական աշխատանքների և կոնֆերանսների կազմակերպում, - հայրենասիրական, անձի զարգացման և մասնագիտական կողմնորոշման, ճամբարների կազմակերպում</p>	Դ ԱԱ
9	<p>«Մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացմանն տարածաշրջանային կենտրոն» կառույցի ստեղծում. - մարզային կրթական ծառայությունների բաց շուկայի վերլուծություն, - բուհի ներուժի և հարուստ փորձի հիման վրա մարզի, ապագայում նաև՝ հանրապետության ուսուցիչների վերապատրաստման կազմակերպում, - պետական և համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, - բիզնես-կրթական ծրագրերի կազմակերպում</p>	ՊԴԱ
10	<p>Հեռավար ուսուցման կազմակերպում. - հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցում, - ազատագարկման վայրերում գտնվող անձանց ուսուցում</p>	ՈԻ ՊԴԱ
11	<p>Ուսանողների արտասուսումնական գործունեության և մասնագիտական դաստիարակության կազմակերպում - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - ուսանողների ստեղծագործական նախասիրությունների և հնարավորությունների մասին տվյալների հավաքագրում, վերլուծություն - ուսանողական խմբերի նախաձեռնությունների ակտիվ աջակցություն</p>	Ու
12	<p>Ազգային փոքրամասնությունների պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված գործունեություն:</p>	ՈԻ ՊԴԱ

* միջոցառումը կրերի տվյալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազմանը

2) Գիտահետազոտական և նորարարական աշխատանքների պլանավորում և օժանդակություն:

Շուվհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանում հետազոտությունների և նորարարությունների կատարելագործումը ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը.

ա) համալիր միջոցառումների մշակում՝ ուղղված համալսարանական միջավայրում գիտական դպրոցների զարգացման համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը,

բ) կիրառական աշխատանքների զգալի ընդլայնում՝ ի շահ բարձր տեխնոլոգիաների ձեռնարկությունների և Լոռու մարզի սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման,

գ) գիտական ձեռքբերումների ներդրումը Վանաձորի պետական համալսարանի կրթական գործունեության մեջ,

դ) տաղանդավոր երիտասարդ հետազոտողների ընտրության, աջակցության և համախմբման նոր ձևերի մշակում,

ե) ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտների, հայաստանյան և արտասահմանյան առաջատար համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ ինտեգրման ընդլայնում:

Նշված խնդիրների լուծումն էականորեն կանդրադառնա համալսարանի գիտական ցուցանիշների դրական դինամիկայի վրա, կամրապնդի համալսարանի դիրքը՝ որպես առաջադեմ հետազոտություններ իրականացնող երիտասարդ մասնագետների ներգրավման կենտրոն, կհեշտացնի արդյունաբերական գործընկերների հետ շահավետ փոխկապակցությունը և կբարձրացնի համալսարանի եկամուտները՝ մարզային տնտեսվարող սուբյեկտների հետ կնքելով պայմանագրեր, հնարավոր կդարձնի ապահովել մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրով ուսանողների թվի աճը:

Առաջնահերթ միջոցառումներ

h/h	Միջոցառման անվանումը / Բենեֆիցարներ (շահառուներ) Դիմորդներ (Դ), ուսանողներ (ՈԻ), պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ (ՊԴԱ), ադմինիստրատիվ աշխատողներ (ԱԱ)	
1	<p>«Ձեռնարկատիրության և նորարարությունների զարգացման կենտրոն – ԲԻՉՆԵՍ ԻՆՎՈՒԲԱՏՈՐ» կառույցի ստեղծում.</p> <ul style="list-style-type: none"> - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - ձեռնարկատիրությունը խթանող կրթության, կրիտիկական մտածողության, ստեղծարարական հմտությունների զարգացման ուսուցման կազմակերպում՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի շահագրգիռ անձանց և ուսանողների համար, - բիզնեսի կազմակերպման Startup (ստարտափ) մոտեցումների տարածում, - մենթորների և փորձագետների պատրաստում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կազմից շահագրգիռ անձանց համար - սոցիալական ձեռներեցության նախաձեռնում և զարգացում 	<p>ՈԻ</p> <p>ՊԴԱ</p> <p>ԱԱ</p>

* միջոցառումը կբերի տվյալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազմանը

h/h	<p align="center">Միջոցառման անվանումը / Բենեֆիցյարներ (շահառուներ) Դիմորդներ (Դ), ուսանողներ (ՈԻ), պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ (ՊԴԱ), աղմինիստրատիվ աշխատողներ (ԱԱ)</p>	
2	<p>«ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» կառույցի ստեղծում.</p> <ul style="list-style-type: none"> - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - գիտատեխնիկական խորհրդի ձևավորում գիտահետազոտական ծրագրերի փորձագիտության համար, - բանակցություններ ՀՀ գիտությունների ակադեմիայի հետ՝ պրոֆիլային հետազոտական որոշակի գործառնությունները կառույցի կազմ տեղափոխելու նպատակով, - մասնագիտացված հետազոտական լաբորատորիաների ստեղծման նախադրյալների ուսումնասիրություն, - կառույցի աշխատակիցներին դրամաշնորհների որոնման և հայտերի ձևավորման աջակցություն, - տնտեսվարող կառույցների հետ պայմանագրային թեմաների կնքում և իրագործում 	<p>Ու ՊԴԱ ԱԱ</p>
3	<p>«ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» կառույցի ստեղծում.</p> <ul style="list-style-type: none"> - մարզում փորձագիտական ծառայությունների շուկայի ուսումնասիրություն և վերլուծություն (օրինակ՝ կապված հանքավայրերի հետազոտման և օգտագործման, բնապահպանական անվտանգության, սննդամթերքի փորձագիտության և այլն, հետ), - պրոֆեսորադասախոսական անձնակազմի շահագրգիռ անձանց վերապատրաստում որպես փորձագետ՝ տարբեր մասնագիտությունների գծով, - փորձագիտական լաբորատորիաների ստեղծում 	<p>ՊԴԱ ԱԱ</p>
4	<p>«ՄԱՐԶԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ-ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» կառույցի ստեղծում՝ Բազում գյուղի հանգրվանային գոտու տարածքում</p> <ul style="list-style-type: none"> - առաջադեմ, նորարար ուսումնա-փորձնական տնտեսության կազմակերպում, բուհի ներուժի օգտագործմամբ (օրինակ՝ էկոլոգիապես մաքուր մթերքների աճեցում, դեղաբույսերի աճեցում, հավաքում և վաճառք և այլն), - ուսումնա-կիրառական բազայի ստեղծում՝ ուսուցման որոշակի ուղղությունների համար (օրինակ՝ դեղագործություն, կենսաբանություն և այլն), 	<p>Ու ՊԴԱ ԱԱ</p>
5	<p>«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» կառույցի կազմակերպում</p> <ul style="list-style-type: none"> - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - որակավորման բարձրացմանը նպաստող միջոցառումների կազմակերպում, երիտասարդ գիտնականների փորձի փոխանակում, - գիտաժողովների, սեմինարների կազմակերպում, հանդիպումներ ճանաչված գիտնականների հետ, - գիտաժողովների և սեմինարների նյութերի, երիտասարդ գիտնականների աշխատությունների, մենագրությունների և գիտական աշխատանքների այլ ժողովածուների հրապարակման խթանում 	<p>ՈԻ ՊԴԱ</p>
6	<p>Ուսանողական օլիմպիադաների նախաձեռնում</p>	<p>Ու ՊԴԱ</p>

* միջոցառումը կրերի տվյալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազմանը

3) Ադմինիստրատիվ-տնտեսական գործունեության վերանայում և բարելավում

Տարածաշրջանային առաջատար համալսարանի հանդիսանալու պահանջը խնդիր է դնում Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի կառավարման համակարգը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին՝ այդ համակարգի գործառնությունների վերանայման, ընդլայնման և կառավարման որոշումների տեղեկատվական թափանցիկության ապահովման համար ձեռնարկելով համապատասխան միջոցառումներ: Բացի այդ, տեղեկատվական աջակցման և գործառնության փոխկապակցվածության արդիականացման համար անհրաժեշտ է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում ներդնել գործառնությունների կազմակերպման տեղեկատվական թվային համակարգ, որը կբերի կառավարման էֆֆեկտիվության բարձրացմանը:

Առաջնահերթ միջոցառումներ

h/h	Միջոցառման անվանումը / Բենեֆիցարներ (շահառուներ) Դիմորդներ (Դ), ուսանողներ (ՈՒ), պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ (ՊԴԱ), ադմինիստրատիվ աշխատողներ (ԱԱ)	
1	Լսարանային ֆոնդի արդիականացում. - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - լսարանների համալրումը անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով (պրոյեկտորներ, համակարգիչներ, ինտերակտիվ գրատախտակներ) - ուսումնական լսարաններում տեսախցիկների տեղադրում*	ՈՒ ՊԴԱ
2	Մանդի, հանգստի և առողջ ապրելակերպի ապահովում. - գործող փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, - բուհի անմիջական ենթակայությամբ սննդի պատրաստում և իրացում, - ուսանողների և աշխատակիցների համար որակյալ սննդի կազմակերպում մատչելի գներով, - բուհի տարածքում ուսանողության արտաուսումնական աշխատանքի և հանգստի գոտիների կազմակերպում, - բուհի տարածքում մարզական-առողջապահական գոտիների ստեղծում	ՈՒ ՊԴԱ ԱԱ
3	Ոչ տեղացի ուսանողների կեցության ապահովում. - քաղաքում գործող հյուրատների ծառայությունների ուսումնասիրություն՝ ուսանողների հնարավոր կեցությունը կազմակերպելու համար, - բուհ-ուսանող-հյուրատուն եռակողմ ընդունելի պայմանագրի կնքման հնարավորության ուսումնասիրություն և իրագործում, - ապագայում սեփական հանրակացարանի կառուցման ծրագրի նախապատրաստում՝ համապատասխան կառույցների և գործարար համայնքի ներգրավմամբ	ՈՒ Դ
4	«Շրջանավարտների ակումբ» կառույցի ստեղծում. - շրջանավարտների ներգրավումը համալսարանական ուսումնական և գիտական տարբեր ծրագրերում, - շրջանավարտների ներգրավումը համալսարանի իմիջի հանրայնացման գործընթացում, - շրջանավարտների հետ կապերի օգտագործումը ուսանողական պրակտիկայի և տարաբնույթ նախագծերի համատեղ կազմակերպման համար, - հաջողակ շրջանավարտների ներգրավումը ներհամալսարանական տնտեսական հարցերի լուծման գործում	

* միջոցառումը կբերի տվյալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազմանը

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

Համալսարանի զարգացմանն ուղղված վերափոխումների հիմնարար ուղղություններն իրագործող առաջնահերթ միջոցառումների ցանկը ենթադրում է համալսարանի զարգացման ռազմավարությունը առաջիկա 5 տարիների գործունեության համար:

Միջոցառումները կազմված են որպես մեկը մյուսից բխող և փոխկապակցված, դրանց իրականացումը տարաբաշխված է ժամանակագրական առումով և կախված է շուկայի հիմնարար հետազոտությունից, ինչպես նաև համալսարանի մարդկային ռեսուրսների իրական հնարավորություններից:

Միջոցառումների նկարագրության ժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որպեսզի դրանք լինեն հնարավորինս իրատեսական, հստակ և պարզ ձևակերպված:

Բուհի զարգացման ռազմավարության (2020-2025թթ.) շրջանակներում սահմանվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները.

1) Կրթական գործունեության արդիականացում

1.1 Որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման ծրագրերով ուսանողների ընդհանուր թվի մեջ երրորդ կողմի կազմակերպություններից գործուղված ուսանողների մասնաբաժինը:

1.2 Ըստ բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագրերի ուսանող անձանց ընդհանուր թվի մեջ մագիստրոսական և ասպիրանտուրայում գիտա-մանկավարժական կադրերի պատրաստման ծրագրերով սովորողների մասնաբաժինը:

1.3 Կրթական ծրագրերի ընդհանուր թվի մեջ էլեկտրոնային դասընթացներով ապահովված բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի մասնաբաժինը:

1.4 Համալսարանի կայքին և սոցիալական ցանցերում համալսարանի համացանցային հաշվին բաժանորդագրվածների թիվը:

1.5 Կրթական նախագծերին մասնակցող դպրոցականների թիվը:

2) Գիտահետազոտական և նորարարական աշխատանքների պլանավորում և օժանդակություն

2.1 Հաշվետու տարվում գիտահետազոտական և գործնական աշխատանքների իրականացումից ստացված միջոցների ընդհանուր գումարը (մլն. դրամ):

2.2 Հաշվետու տարում գիտահետազոտական և գիտական մշակումների համար հատկացված միջոցների գումարը (մլն. դրամ):

2.3 Հաշվետու տարում հրապարակված համալսարանական հրապարակումների քանակը և միջազգային գիտական տեղեկատվական-վերլուծական համակարգերում դրանց վկայակոչումների մասնաբաժինը:

2.4 ՀՀ կրթության, գիտության սպորտի և մշակույթի նախարարության, այլ գերատեսչությունների, գիտական ֆոնդերի և ծրագրերի մրցույթների շրջանակներում (այդ

թվում նաև՝ միջազգային) գիտական նախագծերի իրականացման համար հայտերի քանակը (այդ թվում՝ հաղթած):

2.5 Ուսանողների կողմից մշակվող և իրականացվող սոցիալապես նշանակալի ծրագրերի թիվը:

2.6 Կողմնակի կազմակերպությունների հետ կնքված համագործակցության պայմանագրերի քանակը:

3) Ադմինիստրատիվ-տնտեսական գործունեության վերանայում և բարելավում

3.1 Ուսանողական տարբեր միավորումներում ընդգրկված դասախոսների թիվը:

3.2 Տաղանդավոր երիտասարդների աջակցման և խթանման ընթացիկ ծրագրերի և նախագծերի քանակը:

3.3 Ինտելեկտուալ մրցույթների կազմակերպման գործում գործընկեր ուսումնական հաստատությունների քանակը:

3.4 Մշակութային և կրթական կենտրոնի գործունեությանը մասնակցող ուսանողների թիվը:

3.5 Լրացուցիչ կրթական ծրագրերում ընդգրկված օտարերկրյա ուսանողների թիվը:

3.6 Կրթական գործընթացի իրականացման մեջ ներգրավված գործատու կազմակերպությունների ներկայացուցիչների թիվը:

3.7 Համալսարանի զարգացման մեջ ներգրավված նախկին շրջանավարտների թիվը և տրամադրվող օգնության տեսքերն ու չափերը (մլն. դրամ):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի ֆինանսական փաստաթղթերի և աուդիտորական եզրակացությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բյուջետային ծախսերի մոտ 80%-ը բաշխվում է որպես աշխատավարձ: Ներկայացվող միջոցառումների իրականացման միջոցով հնարավոր կլինի ներգրավել ֆինանսական նոր աղբյուրներ, իսկ բյուջեի եկամուտների ծավալը և ծախսերի հետագա բախշումը հնարավոր կլինի ներկայացել շուկայի հիմնարար հետազոտություններից հետո:

Հայցորդ

Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ

« ____ » _____ 2020թ.

ք. Վանաձոր